



Kingdom of the Netherlands

NEW GENERATION
Netherlands Non-Governmental
Organization



ՆՈՐ ՍԵՐՈՆԳ
Քաղաքացիական Հասարակական
Կազմակերպություն

COUNTERPART
INTERNATIONAL



**ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ
ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ
ԼՁԲՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ
ՀՀ ԱՌՑԱՆՑ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ**

Զ Ե Կ ՈՒ Յ Յ

**ՕՐԵՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՆՈՒՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ**

Հայաստան, Երևան, 2014թ.

**ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ
ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ
ԼՁՔՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ
ՀՀ ԱՌՅԱՆՅ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ**

Զ Ե Կ ՈՒ Յ Յ



Kingdom of the Netherlands

**«NEW GENERATION»
Humanitarian Non-Governmental
Organization**



**«ՆՈՐ ԱԵՐՈՒՆ»
Մարդասիրական Հասարակական
Կազմակերպություն**

**COUNTERPART
INTERNATIONAL**



Սույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության կողմից և Նիդեռլանդների Արտաքին գործերի նախարարության Մատրա ծրագրի ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Շարժվելով առաջ. Հայաստանում քաղաքացիական հասարակության կարողությունների ամրապնդում» ծրագրի շրջանակում «Նոր Մերունդ» Մարդասիրական հասարակական կազմակերպության միջոցով: Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են հեղինակին՝ «Նոր Մերունդ» Մարդասիրական հասարակական կազմակերպությանը, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության և Նիդեռլանդների թագավորության կառավարության տեսակետների հետ:

Նպատակը

Ուսումնասիրել ՀՀ առցանց տիրույթում ԼԳԲՏ անձանց նկատմամբ Ատելության խոսքի առկայությունը 2014թ-ի ապրիլի 1-ից հունիսի 20-ն ընկած ժամանակահատվածում:

ՀՀ առցանց տիրույթ – սոց. ցանցեր և ՁԼՄ-ների առցանց տիրույթ (Էլեկտրոնային մամուլ՝ կայքեր, հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների, տպագիր մամուլի կայքեր):

Խնդիրներ

1. Ուսումնասիրման ենթակա գրառումների և հրապարակումների ամբողջական բազայի ստեղծում:
2. Հավաքագրված նյութի որակական կոնտենտ վերլուծություն:
3. Մոնիթինգային ցանցեր-ՁԼՄ-ների առցանց տիրույթում տեղեկատվության շրջանառության ուսումնասիրում:

Ուսումնասիրման օբյեկտ

1. ՀՀ առցանց տիրույթը:

Ուսումնասիրման առարկա

1. ՀՀ առցանց տիրույթում ԼԳԲՏ -ի նկատմամբ ատելության խոսքի առկայություն:

Մեթոդներ

1. Որակական և քանակական կոնտենտ վերլուծություն
Գործիք՝ Որակական և քանակական կոնտենտ վերլուծության ուղեցույցը թույլ է տալու ստեղծել բազա հետագա որակական վերլուծության աշխատանքների կազմակերպման համար:

Ներածություն

Ապրիլից մինչև հունիսի 20-ն ընկած ժամանակահատվածում կատարվել է ԼԳԲՏ համայնքի նկատմամբ ատելության խոսքի հետազոտություն ՀՀ առցանց տիրույթում: Ուսումնասիրության մեջ ընդգրկվել են նաև մարտ ամսվա որոշ հրապարակումներ, որոնց շուրջ զարգացումները ընթացել են նաև հաջորդ ամիսներին:

Ուսումնասիրվել է մոտ 5 հազար հրապարակում, այդ թվում լրագրական նյութեր, տեսակենտներ - գրառումներ սոց ցանցերում, նյութերի մասին առցանց տարածքում հայտնված կարծիքներ, ՁԼՄ-ների կողմից պարտադրված տեսանյութեր, ձայնագրություններ, որոնք կրկին քննարկվել են առցանց տարածքում:

Ուսումնասիրության արդյունքում տեսանելի է դառնում, որ ատելության խոսքը սերմանելը լայն տարածում ունի հայաստանյան առցանց տիրույթում, ինչը խոսում է այլակարծության, բազմազանության, խղճի և դավանանքի ազատության իրավունքի դրսևորման սահմանափակումների, ինչպես նաև իրավունքի, օրենքների վերաբերյալ տեղեկացվածության պակասի մասին: Հաճախ ատելության խոսքը հանդիպում է զրպարտանք պարունակող հրապարակումներում՝ հենց իրենից ներկայացնելով զրպարտանք, մարդու արժանապատվության ոտնահարում, ազատ արտահայտվելու իրավունքի խախտում և այլն:

Ատելության խոսքի առավել բուռն դրսևորումները վերաբերում են ԼԳԲՏ համայնքին:

Մույն ուսումնասիրությունը ներկայացնում է վերոնշյալ ժամանակահատվածում առցանց տիրույթում ԼԳԲՏ համայնքի նկատմամբ ատելության խոսքի դրսևորումը:

Հետազոտության ընթացքում կատարված կոնտենտ վերլուծության ընթացքում, համապատասխան գործիք փաստաթղթի միջոցով ուսումնասիրվել է ատելության խոսքի

առկայությունը հրապարակումների՝ վերնագրերում, բուն հոդվածում, կամ գրառման մեջ, նյութի հետ հրապարակված լուսանկարում, ֆոտոկոլաժում կամ տեսանյութում:

Հետազոտության մեջ ներառվել են սոց ցանցեր – ՁԼՍ /կայքեր շրջանառությունը պատկերավոր կերպով ներկայացնող նյութեր:

Ուսումնասիրված նյութերը ընդհանրացվել են երեք հիմական խմբերում /ատելության խոսք և ագրեսիա պարունակող, առավել չեզոք, իրական հերոսներով օբյեկտիվ նյութեր/, և այդ խմբերի առանձնահատկությունները առավել ամբողջական ներկայացնող նյութերը նույնպես ներառվել են հետազոտության մեջ:

ՀՀ առցանց տիրույթում ատելության խոսքի դրսևորման գազաթնակետը. Եվրատեսիլյան փուլը, իր բոլոր զարգացումներով և դրանք բնորոշող առավել ցայտուն օրինակներով, նույնպես ներկայացված է հետազոտության մեջ:

Այսինքն ներառված օրինակները հնարավորինս ընդհանրացնող կերպով ուրվագծում են ատելության խոսքի դրսևորումն ու զարգացումները ՀՀ առցանց տիրույթում ուսումնասիրված ժամանակահատվածում:

Սոցիալական ցանցեր-ՁԼՄ-ների առցանց տիրություն տեղեկատվության շրջանառություն

Սոց. ցանց \longleftrightarrow ՁԼՄ/կայք

Առցանց տիրություն տեղեկատվությունը շրջանառվում է սոց. ցանց-ՁԼՄ/կայք շրջանով:

ԼԳԲՏ համայնքի նկատմամբ ատելության խոսքի դրսևորումները ավելի հաճախ հայտնվում են նախ սոց. ցանցերում, ապա որպես գրառում տեղադրվում են կայքերում կամ իրենց արձագանքը գտնում այլ ՁԼՄ-ներում:

Տեղեկատվության տարածման, հետադարձ կապի ապահովմամբ շրջանառման ամենից ակտիվ օղակը սոց. ցանցեր-կայքեր կապն է:

Հատկապես բոզ բաժին ունեցող կայքերի համար առաջին հիմնական աղբյուրը սոց. կայքերն են, անհատների, կազմակերպությունների ֆեյսբուքյան, թուիթերյան էջերը:

Կայքերի էջերում հայտնվում են հենց այնպիսի գրառումները, որոնք կարող են բանավեճերի առարկա դառնալ և զարգացումներ ունենալ:

Կայքերն ունեն անհատ մասնագետների, քաղաքացիական ակտիվիստների, կազմակերպությունների ֆեյսբուքյան էջերի իրենց համար աղբյուր հանդիսացող ցանկ:

Առցանց տիրություն հայտնվում և քննարկման առարկա են դառնում նաև հեռուստատեսությունների, ռադիոընկերությունների և տպագիր մամուլի կողմից ԼԳԲՏ համայնքի վերաբերյալ պատրաստված նյութերը, տեսանյութերը, ձայնագրությունները: Այս նյութերի վերաբերյալ գրառումները սոց. ցանցերում կրկին դառնում են նյութեր կայքերի համար:



Օրինակ՝ «Շանթ» հեռուստաընկերության «Իքս ֆակտոր» նախագծի հետևյալ թողարկման տեսանյութը քննարկման առարկա դարձավ առցանց տարածքում: Նախագծի մասնակիցներից մեկը իր ելույթը նվիրեց հոմոֆոբիայի գոհերին՝ նշելով, որ մայիսի 17-ը հոմոֆոբիայի, տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրն է: Տեսնայություն առկա է ժյուրիի անդամների մեկնաբանությունները, որոնք ունեն բացասական և ծաղրական երանգներ /տեսանյութում 8:15-ից սկսած/:

Տեսանյութը տեղադրվեց կայքերում, օրինակ blognews.am կայքում հետևյալ վերնագրով. «**X Factor-ի մասնակիցը բեմը վերածեց հոմոսեքսուալիզմի քարոզի հարթակի**» <http://blognews.am/arm/news/167746>

Տեսանյութն արժանացավ տարբեր արձագանքների, եղան ԼԳԲՏ համայնքի նկատմամբ ատելության խոսքի դրսևորումներ, անձնական վիրավորանքներ, հայհոյանքներ, քննադատություններ, եղան և խիստ սակավաթիվ կարծիքներ ի պաշտպանություն հանդուրժողականության:

Ստորև ներկայացված են որոշ օրինակներ:

Տեսանյութի առիթով արված ատելության խոսք, բացասական վերաբերմունք և անձնական վիրավորանք պարունակող գրառում, որը անձնական բոզից հայտնվել է կայքում և սոց. ցանցերում.

Հատված գրառումից

Լավ հիշեք այս դեմքը: Օրերս այս «мальчик»-ը նորից եթերում էր: Շանթ հեռուստաընկերության նախագծերից մեկին՝ **X ֆակտորին, էր մասնակցում**: Մինչ այդ մասնակցել է նաև Արմենիայի երաժշտական նախագծերից **Հայաստանի Չայնին**: Մշտական մասնակից է ԼԳԲՏ և համասեռաՄՈԼական ու կեղծ-լիբերալիզացված բազմաթիվ նախագծերի և միտինգների: Երբեմն փորձում է նաև մաքուր ջրերում պղտոր ձկներ որսալ: Վարում է արվաՄՈԼության ու իգաՄՈԼությանը կամ պարզապես ոչ ավանդական սեռական կողմնորոշումներին վերաբերող կայքեր ու համացանցային էջեր: Մի անգամ հետս գրույցի բռնվելով փորձում էր ապացուցել, որ Աստվածաշունչը և քրիստոնեությունը ամեննին դեմ չեն իր «դավանած» սեռակողմնորոշմանը: Ի դեպ, այս այլընտրանքայինը համացանցում գերակտիվորեն աշխատում էր հոգուտ մորուքավոր «մորթուրի»: Ինչևէ: Ո՞րն է սարկազմիկ այս գրառմանս

նպատակը: Սևակ Կիրակոսյան անունով չերգիչը Իքս Ֆակտորում անհաջող ելույթ ունենալուց հետո ստանալով քննադատություններ իր բուլանովական տաղանդի վերաբերյալ՝ չխորշեց հայտարարել, որ իր ելույթի օրը հումֆոբիայի դեմ պայքարի օր է ճանաչված և իր անհաջող **ելույթը նվիրում է բոլոր գոհերին...** Սա առաջ բերեց ժյուրիի անդամների ոմանց ծիծաղը, որոշների էլ զայրույթը այն աստիճան, որ **կադրից դուրս արտահայտեցին իրենց վրդովմունքը**, բայց իզուր... Բացատրեմ ինչու:

<http://blognews.am/arm/news/167712/nvirvum-e-homofobiayi-zoherin.html>

<http://www.sarkavagagirq.net/2014/06/homofobia.html>

Ստորև ներկայացված գրառումները նյութի վերաբերյալ արձագանքներից են.

Հովհաննես Գալաջյան · Top Commenter · Գլխավոր խմբագիր at Իրավունք Թերթ

ՀԱՅԵ՛Ր, ԴԵՍՔՈՎ ՃԱՆԱՉԵՔ ԱԶԳԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹՇՆԱՍՈՒՆ

Ai De Karra ·

ախր էնքան էլ տհաճ դեմք է, ոնց հիշենք? սատանի մեսիչ են մեզ ուղարկված(((ցավալի է, բայց ճագարի նման բազմանում են

Տեսանյութի վերաբերյալ գրառումը, հայտնվելով սոց. ցանցում, տարածում է ատելության խոսքի կրկնակի չափաբաժին՝ անձնական վիրավորանքով, խտրական վերաբերմունքով, քաղաքական ենթատեքստով, վարկաբեկման և բացասական վերաբերմունքի ստեղծման մտիվներով:

Ֆեյսբուքյան գրառում.

Իրականում այս փոքրամասնությունը շատ ակտիվ գործակալ է հայաստանյան մի քանի ԼԳՏԲացված կազմակերպությունների ձեռքին՝ օտարերկրյա գրանտներ լավելու և Հայաստանի անունը մրոտելու համար: Տրամաբանական մի հարց բոլորիդ. Սևակկիրակոսյանական կողմնորոշում ունեցող մարդիկ իրականում իրենց հարմար և ազատ չեն զգում Հայաստանի տարածքում և մեծ հեռանկարներ ունեն արտերկրում ազատ կողմնորոշմամբ կյանք ապրելու և «բոնությունների» չենթարկվելու ինչպես ասենք այս կադրերում: Ուրեմն ինչո՞ւ մի քանի լեզվի տիրապետող հակապոմիներ չի լքում այդքան անազատ ՀՀ տարածքը: Պատասխանը մեկն է՝ **нас и здесь не плохо кормят:**



<https://www.facebook.com/azgayinarjeq>

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ԼԳՏՏ համայնքի իրավունքներն ու շահերը պաշտպանող գրառումներով հանդես են գալիս օգտատերերի 10-15%-ը, որոնց 5-10%-ն է, որ իրական էջերից են գրառումներ անում, մնացած դեպքերում ԼԳՏՏ համայնքին պաշտպանում են կեղծ էջեր ունեցող օգտատերեր, ինչը կրկին խոսում է հանրության անհանադուրժողականության մասին:

Այս տեսանյութի վերաբերյալ հայտնվեց նաև ԼԳՏՏ համայնքի նկատմամբ անհանդուրժող վերաբերմունքը քննադատող տեսակետ: Այն նույնպես տեղ գտավ կայքերում՝ դառնալով ատելության խոսքի, անհանադուրժողականության և հանդուրժողականության բախման առիթ:

Հերմին Պալյանի ֆեյսբուքյան գրառում.



Հիմա բազմաթիվ ֆեյսբուքյան հիացական գնահատականներ են տալիս ժյուրիին, որ այս տղայի ասածի կապակցությամբ արձագանքեցին այնպես, ինչպես արձագանքեցին, իսկ ինձ դա ամենին էլ դուր չեկավ, անգամ տհաճ էր:

Ես չեմ հասկանում, եթե մարդը գեյ է, ուրեմն ապրելու ու ինքնաարտահայտվելու իրավունք չունի: Ինչո՞ւ պետք է միջազգային այս շոուի պրոֆեսիոնալ ժյուրին իրեն հենց եթերում հոմոֆոբական արտահայտություններ թույլ տա:

Հասկանում եմ՝ մեր հասարակությունը դեռ պատրաստ չէ իր խավարամտության մեջ տեսնել ու ընդունել իր կողքինին, դրա համար հիմա բազմաթիվ մարդիկ հիացական բացականչություններ են հղում Անդրեին ու այլ անդամներին, բայց մինչև ե՞րբ պետք է մենք մնանք այս միջնադարյան կարծրատիպերի մեջ:

Բացի դրանից, ո՞ւր են նայում շոուի պատասխանատուները: Իմ կարծիքով, «X-Factor» անցկացնելու լիցենզիայից պետք է զրկեն «Շանթ» հեռուստաընկերությանը, կամ «Շանթ»-ը պետք է փոխի ժյուրիի կազմը, քանզի եվրոպական այս պրոյեկտում տեղ ու առավել ևս որոշելու իրավունք պետք է ունենան մարդիկ, ովքեր իրենք են կրում եվրոպական արժեքներն իրենց մեջ, այլ ոչ թե ասելություն քարոզում հեռուստաէթերից:

<http://blognews.am/arm/news/167780/ete-mardy-gey-e-uremn-aprelu-u-inqnaartahaytvelu-iravung-chuni.html>

Մեղիա դաշտն ու առցանց տիրույթը աստելության խոսքի դրսևորման հարթակ

ՀՀ առցանց տիրություն, ցավոք, ոչ միայն սոց. ցանցերում, այլև մեղիա դաշտում նույնպես հաճախ հանդիպում են հրապարակումներ, որոնք ոչ միայն որևէ իրական տեղեկություն չեն փոխանցում, այլև բացառապես աստելություն և ագրեսիա են փոխանցում ԼԳԲՏ համայնքի և նրանց նկատմամբ հանդուրժողականության կոչ անող անձանց ու կազմակերպությունների նկատմամբ:

Բազմաթիվ են այնպիսի հոդվածներ, նյութեր, որոնցում ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչները, «աղանդավորները» /աղանդավոր տերմինը բացասական երանգավորում ունի հասարակության լայն շերտերի համար/ նույնացվում են հանցագործների, բացասական կերպարների հետ:

Ձևավորվում են արդեն բացասական վերաբերմունք ստեղծող արտահայտություններ, որոնց միջոցով, օրինակ, աստելություն է սերմանվում ոչ միայն ԼԳԲՏ համայնքի, այլև եվրոպական քաղաքակրթության, քրիստոնեական տարբեր ուղղությունների, կրոնների, հատկապես մարդու իրավունքների, շահերի պաշտպանության և այլ ոլորտում դրամաշնորհային ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպությունների, հանդուրժողական դրսևորում ցուցաբերող անձանց նկատմամբ:

Առցանց տարածքում բազմաթիվ են նմանատիպ վերնագրերը.

«Արևմուտքն արդեն խեղդվում է համասեռամուլների, մանկապիղծների և այլոց իրավունքները պաշտպանելուց»

http://iravunk.com/index.php?option=com_content&view=article&id=15287%3A2014-04-11-17-27-56&catid=41%3Alurer&Itemid=57

«Համասեռամուլ-քահանան միանձնուհիների փողերը ծախսել է սիրեկանի վրա»

http://henaran.am/news_view.php?post_id=40421

«Դարձիր աղանդավոր, թե չէ կիմանան, որ գոմիկ ես...» սպառնացել են 22-ամյա երիտասարդին»
http://henaran.am/news_view.php?post_id=40853

«Հոգեբանների ամերիկյան ասոցիացիան, ուսումնասիրելով համասեռականությունը եկել են այն եզրահանգման, որ այն իրենից ներկայացնում է հոգեբանական շեղում, հիվանդություն»
<http://operativ.am/?p=72106>

Ազգային արժեքների պահպանման ճակատ

«Գենդերը» դիվահար է անում մարդկանց. Նոր առաջարկությունների փաթեթը՝ բուռն քննադատության թիրախում <http://medialab.am/news/id/5137>

Ցավոք նմանատիպ վերնագրերով նյութերը, ոչ միայն չեն պարունակում իրական արժեքավոր փաստեր, այլև բացառապես տարածում են ատելության խոսք, ստեղծում բացասական վերաբերմունք՝ սեռական և կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչներին նույնացնելով հանցագործների հետ:

Կան ֆեյսբուքյան խմբեր, կայքեր, որոնք ամենաուղիղ և բաց կերպով քարոզում են ատելություն ԼԳԲՏ համայնքի, ինչպես նաև կրոնական այլ դավանանքների ներկայացուցիչների նկատմամբ՝ նրանց պիտակելով «աղանդավոր»: Ատելություն է քարոզվում հատկապես մարդու իրավունքների, շահերի պաշտպանության ոլորտում ծրագրեր իրականացնող, հանդուրժողականություն քարոզող կազմակերպությունների և անձանց նկատմամբ:

Այս խմբում առաջատար են «Իրավունք» թերթի www.iravunk.com կայքը և «Ազգային արժեքների պահպանման ճակատ» հասարակական կազմակերպության ֆեյսբուքյան էջը: <https://www.facebook.com/azgayinarjeq>

- ՀՀ առցանց տիրույթում գրեթե բացակայում են լրագրողների և ՋԼՄ-ների կողմից պատրաստված իրական հերոսներով ԼԳԲՏ համայնքի հիմնախնդիրների մասին վերլուծական նյութերը:
- Սովորաբար առավել չեզոքները լինում են արտասահմանյան ՋԼՄ-ներից թարգմանված փոքրիկ լուրեր կամ կարճ հոդվածներ:
- Իսկ առավել շատ ագրեսիա և ատելության խոսք պարունակող հոդվածներ հայտնվում են հատկապես «Բլոգ» բաժին ունեցող կայքերում, որոնք սոց. ցանցերում տարածվող կարծիքները, հատկապես ամենասենսացիոնները, տեղադրում են «Բլոգ» բաժիններում:

Սա արվում է ոչ միայն լայքեր հավաքելու նպատակով, այլև այս կերպ լրատվամիջոցը, գայթակղելով ընթերցողին, միաժամանակ խուսափում է հեղինակային պատասխանատվությունից՝ հերքում կամ այլ կարծիք տեղադրելու պատրաստակամություն հայտնելով: Սակայն սոց. ցանցերում տարածվում են հատկապես ատելություն և ագրեսիա պարունակող վերնագրով «գայթակղիչ» նյութեր, իսկ դրանց հերքումն ու դրանց վերաբերյալ այլ կարծիքներն ավելի քիչ արձագանք են գտնում:

- Կան նյութեր, որոնք թվում է ատելության խոսք չեն պարունակում, բայց շեշտադրումներով և ենթատեքստով ստեղծում են ատելության, անհանդուրժողականության մթնոլորտ: Հաճախ դրանք լրագրական էթիկայի խախտումներով, կամ առանձնապես տեղեկատվություն չհաղորդող նյութերն են.

Թեև այս հրապարակման մեջ չկան ատելություն պարունակող բառեր, բայց կա հայկական առցանց ՋԼՄ-ներում հաճախ հանդիպող դրսևորում. հատուկ շեշտադրումների միջոցով /գրեթե միշտ ոչ մասնագիտական, այսինքն լրագրական մասնագիտական, էթիկական չափանիշներին չհամապատասխանող, կողմնապահ/ բացասական վերաբերմունքի ստեղծում հասարակության մեջ ԼԳԲՏ համայնքի հիմնախնդիրներով զբաղվող, հատկապես այսպես կոչված, «Արևմուտքից ֆինանսավորվող» շԿ-ների կամ անձանց նկատմամբ:

Հոդվածն ամբողջությամբ՝ ստորև.

Հիմա էլ գենդերային բաղադրիչը ուզում են ներառել «Հասարակագիտություն» առարկայի մեջ

Վերնագրում «Գենդեր» տերմինն ունեցող այս նյութի հետ տեղադրվել է ՀՀ առցանց տարածքում հոմոսեքսուալներին բնորոշող լուսանկար՝ «գենդեր» տերմինը միանգամից նույնացնելով հասարակության համար ավելի հեշտ ընկալելի նույնասեռականության հետ:

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, ՀՀ կառավարությունն այս տարի հրաժարվել է կիրառել գենդերային գաղափարախոսության դրույթները պետական ծրագրերում և իրավական ակտերում: Մասնավորապես նոր իրավական ակտերում, որոնք վերաբերվում են կանանց և տղամարդկանց իրավահավասարության խնդիրներին, «գենդեր», «գենդերային», «գենդերային բռնություն», «գենդերային մայնսթրիմինգ», «գենդերային հավասարություն» եզրույթներն այլևս չեն կիրառվում: Որոշ դեպքերում կիրառվում է «սեռի հատկանիշով պայմանավորված բռնություն»:

Հարկ է նշել, որ դեռ վերջերս սևագիր նախագծերում ամբողջովին կիրառվում էր «գենդեր»-ը, և առկա էին դրանից բխող բոլոր վտանգավոր երևույթները, սակայն բանակցությունները և պայքարը տվեցին արդյունք:

Չնայած կառավարության դիրքորոշմանը՝ Արևմուտքի կողմից հովանավորվող ՀԿ-ները, այսպես կոչված, գենդերային բաղադրիչը ցանկանում են ներդնել ուսումնական ծրագրերում: Այդ կապակցությամբ այսօր ժամը 11-ին «Կոնգրես» հյուրանոցում նախատեսված է «Գենդերային բաղադրիչի ներառումը «Հասարակագիտություն» առարկայի մեջ» թեմայով կլոր սեղան: Մեր տեղեկությունների համաձայն միջոցառման կազմակերպիչը կամ կազմակերպիչներից մեկը «Հասարակություն առանց բռնության» ՀԿ-ն է:

Աղբյուր՝ <http://nyut.am/archives/163173>

Այս հրապարակման տեքստում կիրառվում է «գենդեր» տերմինը բացասական ենթատեքստային և ուղիղ շեշտադրումներով. տառացի մեջբերում հոդվածից. «կիրառվում էր «գենդեր»-ը և առկա էին դրանից բխող բոլոր վտանգավոր երևույթները», «ՀՀ կառավարությունն այս տարի հրաժարվել է կիրառել գենդերային գաղափարախոսության դրույթները պետական ծրագրերում և իրավական ակտերում»:



Ստորև ներկայացված նախադասությամբ շահարկելով պետականության հետ ՀԿ-ի հակադրումը՝ ներկայացվում է փաստ, որի մասին ոչինչ չի բացատրվում: Օրինակ՝ ի՞նչ ասել է գենդերային բաղադրիչի ներդրում ուսումնական ծրագրերում:

Տառացի մեջբերում հոդվածից. «Չնայած կառավարության դիրքորոշմանը՝ Արևմուտքի կողմից հովանավորվող ՀԿ-ները, այսպես կոչված, գենդերային բաղադրիչը ցանկանում են ներդնել ուսումնական ծրագրերում»:

Իսկ վերջին նախադասությամբ փոխանցվում է կեղծ ինտրիգ, թե իբր իրենք հայտնաբերել են «հույժ գաղտնի» տեղեկություն կազմակերպիչների մասին: Այն ինչ դա բաց տեղեկություն է, հատկապես եթե չի նշվում, որ ՀԿ ներկայացուցիչները կամ կազմակերպիչները հրաժարվել են ներկայանալ: Մա խոսում է այն մասին, որ հաճախ նման նյութերի իրական նպատակը միայն ինտրիգի ապահովումը և բացասական վերաբերմունքի ստեղծումն է :

Շատ են հանդիպում նաև այնպիսի նյութեր, որոնք կրկին թվում է թե ատելության խոսք չեն պարունակում, սակայն նյութերի հետ տեղադրում են այնպիսի նկարներ, որոնք բացասական արձագանք են գտնում հասարակության մեջ: Օրինակ, ԼԳԲՏ համայնքի նյութերի հետ տեղադրում են նույնասեռականներին ներկայացնող սեռական բովանդակության լուսանկարներ:



Օրինակ, այսպիսի հետևյալ վերնագրով և նկարով նյութ՝ «Գեյերի եկեղեցի Երևանում»

http://henaran.am/news_view.php?post_id=38239

Առցանց տիրություն ԼԳԲՏ համայնքի նկատմամբ ատելության խոսքի չափաբաժինները տոկոսային հարաբերակցությամբ և օրինակներով

Ուսումնասիրման ժամանակահատվածում հրապարակված նյութերի 80-85%-ը պարունակում են բացասական վերաբերմունք, ատելության խոսք և ագրեսիա՝ ուղղված ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների և նրանց շահերը պաշտպանող կամ հանդուրժողականության դրսևորումներ ցուցաբերող անձանց ու կազմակերպություններին:

Այս նյութերի զգալի մասը սոց. ցանցերից ՁԼՄ-ներում հայտնված գրառումներն ու դրանց շուրջ տեղի ունեցած զարգացումներն են: Հաճախ նաև ՁԼՄ-ի կողմից պատրաստված նյութի շուրջ ծավալվող զարգացումներն են հայտնվում սոց. ցանցերում, որոնք կրկին իրենց հերթին հայտնվում են առցանց ՁԼՄ-ների էջերում:

Ամենացայտուն օրինակներից մեկը, երբ www.iravunk.com-ը հոդվածի միջոցով ատելության և ագրեսիայի կոչ է անում՝ վիրավորելով ոչ միայն ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչներին, այլև նրանց նկատմամբ հանդուրժողականություն ցուցաբերող անձանց/իրավապաշտպաններին՝ կոչելով նրանց ազգի և պետության թշնամիներ:

ԱԶԳԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԹՇՆԱՄԻՆԵՐ



Համասեռամուլների շահերի լոբբիստները փորձում են ագրեսիվ կերպով հաստատել իրենց խաղի կանոնները մեր երկրում: «Եվրաստեպի» կոչվող զարշանքի առնչությամբ սրանք սկսել են հալածել և կոտրել այն մարդկանց, ովքեր բարձրաձայնել են սեփական բնական զզվանքը կոնչիտա կոչվող մարդկային թափոնի նկատմամբ: Սրանց նպատակը հասկանալի է՝ վախեցնել բոլոր նրանց, ովքեր կհամարձակվեն ընդդիմանալ Հայաստանում այլասերվածությունը որպես նորմա հաստատելու ձգտումներին: Գեյ-լոբբինգի նպատակները բավականին թափանցիկ են՝ հաստատել այնպիսի խաղի կանոններ, որ կտրուկ արգելակվեն բնակչության վերարտադրության հնարավորությունները, իսկ գորակոչային տարիքի սերնդի մարտունակությունը մոտենա զրոյին:

Սկզբում նրանք կոտրեցին և ստիպեցին ներողություն խնդրել **Արամ ՄՔ3**-ին, 3 օրում կոտրեցին ու ստիպեցին ներողություն խնդրել Անուշ ու Ինգա Արշակյաններին: Այդ համեստ ու պարկեշտ քույրերի պարագայում բոլորի աչքի առաջ էր, թե ինչպես «Ազատություն» ռադիոկայանի ֆեյսբուքյան ասուլիսի էջում նրանք կազմակերպել էին մի գարշելի աուտոդաֆե **Արշակյան** քույրերի դեմ:

Այդ լոբբիստների առաջխաղացումը կանգնեցնելու միայն մեկ ձև կա՝ **ԶՐՈ ՀԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՒՄ**: Անկախ նրանից՝ լոբբիստներին մասնակցին վճարել են դրա համար, ստիպել են, թե՛ ուղեղն այնքան են վրաճեցրել, որ դարձրել են գեյ-քարոզչության դրոյթներին հավատացող գումբի: Կապ չունի այդ ամենը՝ յուրաքանչյուր լոբբիստ Ազգի և Պետության ներքին թշնամի է, և վերջ: Ու հենց այդ նկատառումով, ինչքան հասցրեցի, կազմեցի ֆեյսբուքյան ասուլիսի էջում Անուշի ու Ինգայի դեմ հալածանքին մասնակցածների սև ցուցակ:

Հիմա ո՞ւմ համար օգտակար կլինեն սև ցուցակները.

1. **ՍՈՎՈՐԱԿԱՆ ՄԱՐԴԿԱՆՑ**, որպեսզի այդ լոբբիստներին հետ դադարեցնեն շփումներն ինչպես համացանցում, այնպես էլ ռեալ կյանքում, նրանց բարև չտան, չօգնեն որևէ հարցում, հետները գործնական հարաբերությունների մեջ չմտնեն:
2. **ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻՆ**, որպեսզի այդ լոբբիստներին չընդունեն պետական ծառայության, իսկ եթե սրանք պետական օղակներում կան՝ հեռացնեն ցանկացած հարմար պատրվակով:
3. **ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻՆ**, որպեսզի այդ լոբբիստներին աշխատանք չտան:
4. **ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻՆ**, որպեսզի այդ լոբբիստներին հնարավորություն չտան ազդելու հանրային կարծիքի վրա:
5. **ԿՐԹՕՋԱՒՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ**, որպեսզի այդ լոբբիստները հնարավորություն չունենան մասնակցել մատաղ սերնդի դաստիարակությանը: *Սրանով, անշուշտ, չեն սահմանափակվում այն ոլորտները, ուր հնարավոր է սահմանափակել գեյ-լոբբիստների գործունեության հնարավորությունը: Ստորև ներկայացնում ենք այն անձանց ֆեյսբուքյան պրոֆիլների ցուցակը, ովքեր ակտիվորեն մասնակցել են Ինգա և Անուշ Արշակյաններին հալածելու արշավին.*

Ապա ստորև ներկայացվում է մի շարք անձանց ֆեյսբուքյան էջերի հղումներ:

http://www.iravunk.com/index.php?option=com_content&view=article&id=16435%3A2014-05-17-16-18-23&catid=123%3Atop

Այս ցուցակում հայտնվել էին նաև «Նոր Մերունդ» մարդասիրական հասարակական կազմակերպության աշխատակիցների ֆեյսբուքյան էջերը: Կազմակերպությունը ներկայացրել է հերքման և ներողության հրապարակային պահանջ, որը սակայն դեռ չի բավարարվել: Նյութի առիթով «Նոր Մերունդ» մարդասիրական հասարակական կազմակերպության նախագահ Մերգեյ Գաբրիելյանը տեղեկացրել է, որ կազմակերպությունը աջակցելու է աշխատակիցներին դատարան դիմելու և ՀՀ սահմանադրությամբ, բոլոր ներպետական և միջազգային իրավական ակտերով ամրագրված անձանց իրավունքները պաշտպանելու, սոցիալական արդարության հասնելու համար: Նյութի առցանց հղումը՝ ստորև.

<http://ngngo.net/2014/06/%D5%B0%D5%A5%D6%80%D6%84%D5%B4%D5%A1%D5%B6-%D6%87-%D5%B0%D6%80%D5%A1%D5%BA%D5%A1%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%B6%D5%A5%D6%80%D5%B8%D5%B2%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%BA/>

Նյութի առիթով դատարան են դիմել վերոհիշյալ հոդվածի ցուցակում ընդգրկված 15 անձ. Նյութը՝ www.datalex.am կայքից.

Օգտի համար	Պատվար	Վարկ	Պատասխանող	
ԵԿԴ.2760/02/14	Վարձակառնական	Լոր սերունդ ճարտարագիտական հասարակական կազմակերպություն	Իլինա Ազարյան	ճշտել
Քրեարարիանձամբ աստճախված վնասի հատկանշան ա՛մ 3 000 000 ՀՀ դրամ գումար՝				
ԵԿԴ.2707/02/14	Որսերեն Անիմացիան	Նան Փարսադյան	Իրախոնք Մեղիա ՍԳՈ	ճշտել
Չրապարտված Ներուրյուն ինդի ու Չրապարտված հանար լոր տեղեկացումը հերթել ու գումար բեռագանելու ա՛մ 15 000 000 ձեւ ձիւրո՛ւ ՀՀ դրամ				
ԵԿԴ.2746/02/14	Արագիկ Արշակունյաց	Չիլարյան Օնորյան	Ճշիաննեւ Չաղարյան	ճշտել
Պատվար արձանաատվարյուն արտատվող տեղեկացումը հերթել ու Ե վնասի հատկանշան ա՛մ 3 000 000 ՀՀ դրամ գումար՝				
ԵԿԴ.2044/02/14	Վարձակառնական	Ունիկ Պանոսյան	Ճշիաննեւ Չաղարյան	ճշտել
Պատվար արձանաատվարյուն արտատվող տեղեկացումը հերթել ու ա՛մ				
ԵԿԴ.2042/02/14	Որսերեն Արտարյան	Արիկ Արտարյան	Ճշիաննեւ Չաղարյան	ճշտել
Պատվար արձանաատվարյուն արտատված վնասի հատկանշան ա՛մ 3 700 000 ՀՀ դրամ				
ԵԿԴ.2037/02/14	Իրապարտ Անուշյան	<<ՆԵ ԱՅԻՆ>> ՍԳՈ	<<Շուր և Իրախոնք>> ՁԻՇՆ	ճշտել
Քրեարարիանձամբ աստճախված վնասի հատկանշան ա՛մ				
ԵԿԴ.2034/02/14	Չարտիկ Արտարյան	Արար Քոչարյան	Իրախոնք Մեղիա ՍԳՈ	ճշտել
Պատվար արձանաատվարյուն արտատվող տեղեկացումը հերթել ու Արտարյան խնդր Չարտարյանից ու Չարտարյան հանար լորտարտելու վարկ ու ա՛մ				
ԵԿԴ.0027/02/14	Արտիկ Պարտարյան	Արտար Եղիանյան	Իրախոնք Մեղիա ՍԳՈ	ճշտել
Պատվար արձանաատվարյուն և գումարի հանարված աստճախված վնասի հատկանշան ա՛մ				
ԵԿԴ.3386/02/13	Ինիկ Ալեքսիանյան	Ճանք ՍԳՈ	Իրախոնք Մեղիա ՍԳՈ	ճշտել
Քրեարարիանձամբ աստճախված վնասի հատկանշան ա՛մ 2 000 000 ՀՀ դրամ				
ԵԿԴ.3307/02/13	Արտիկ Պարտարյան	Արտար Եղիանյան	Վարդան Պարտարյան	ճշտել
Պատվար արձանաատվարյուն և գումարի հանարված աստճախված վնասի հատկանշան ա՛մ				
ԵԿԴ.1941/02/13	Ինիկ Ալեքսիանյան	Ճանք ՍԳՈ	Իրախոնք Մեղիա ՍԳՈ	ճշտել
Քրեարարիանձամբ աստճախված վնասի հատկանշան իրապարտված Ներուրյուն խնդր ու հերթան աստճախելու ա՛մ 3 000 000 ՀՀ դրամ ա՛մ				
ԵԿԴ.1556/02/13	Վարձակառնական	Ճանք ՍԳՈ	Իրախոնք Մեղիա ՍԳՈ	ճշտել
Արտարարիանձամբ աստճախված վնասի հատկանշան իրապարտված Ներուրյուն խնդր ու հերթան աստճախելու ա՛մ 3 000 000 ՀՀ դրամ որսեւ վնասի հատկանշան ո՛րի 10 000 000 ՀՀ դրամ հասցան վնասի հատկանշան 200 000 ՀՀ դրամ Չարտարյան հանար բեռագանել ու ա՛մ				
ԵԿԴ.1309/02/13	Ալեքսիկ Արտարյան	Ներուրյան Արտարյան	Իրախոնք Չիլար	ճշտել
Պատվար արձանաատվարյուն աստճախված վնասի հատկանշան ա՛մ				
ԵԿԴ.1004/02/12	Վարձակառնական	<<Նիկոնոս>> ՍՈՒ	Արտիկ Արտարյան	ճշտել
Արտարի բեռագանն աստճախված վնասի հատկանշան ա՛մ				
ԵԿԴ.2840/02/11	Չիլարյան Պարտարյան	Արտար Արտարյան	Իրախոնք Վերագնորյուն Չարտարյան	ճշտել
Պատվար արձանաատվարյուն Չարտարյան արտատվող տեղեկացումը հերթել ու Արտարյան խնդր ու աստճախելու ա՛մ				

Իսկ «Ազգային արժեքների պահպանման ճակատ» ՀԿ-ն տարածում է ատելության խոսք ինչպես ՋԼՄ-ների միջոցով, այդպես էլ կազմակերպության ֆեյսբուքյան էջում «ջանասիրաբար» զրպարտելով, անձնական վիրավորանքներով, բացասական որակումներ տալով՝ հաճախ խախտելով մարդու իրավունքները, խղճի, դավանանքի ազատ արտահայտման և այլ իրավունքները, անդադառնում է առցանց տիրույթում կամ ՋԼՄ-ներում հայտնված յուրաքանչյուր նյութի, որն առնչվում է ԼԲԳՏ համայնքին:

<https://www.facebook.com/azgayinarjeq>

Ուսումնասիրման ժամանակահատվածում հրապարակված նյութերի 10-15%-ը ԼԳԲՏ համայնքի նկատմամբ համեմատաբար չեզոք նյութերը միջազգային, արտասահմանյան լրատվամիջոցներից թարգմանված տեղեկատվություններն են, բայց ոչ միշտ:

Այն նույնպես կարող է հայտնվել սոց. ցանցերում ատելություն պարունակող մեկնաբանություններով:



Բեռլինում լեսբուհիների գերեզմանոց կհայտնվի

Բեռլինի գերեզմանոցներից մեկում լեսբուհիների հուղարկավորության համար նախատեսված տարածք կառանձնացվի առաջիկա կիրակի: Այս մասին հաղորդում է Газета.ru-ն՝ հղում կատարելով Associated Press-ին: Համապատասխան հայտարարությունն արվել է ԼԳԲՏ ընկերակցության ծերերի օգնությանը զբաղվող «Մաֆիա» ասոցիացիայի մամլո քարտուղար Ուսա Զակաուի կողմից:

Զակաուի խոսքով լեսբուհիների համար գերեզմանատանը 400 ք/մ տարածք կտրամադրվի:
<http://www.tert.am/am/news/2014/04/02/lesbuhineri-gerezmanoc/>

Ուսումնասիրման ժամանակահատվածում հրապարակված նյութերի մոտ 5 %-ը Հայաստանյան ԼԳԲՏ համայնքի հիմնախնդիրների մասին, իրական հերոսներով և իրական փաստերով օբյեկտիվ հրապարակումներն են:

Այս նյութերի հեղինակները կամ հանդիսանում են մարդու իրավունքների, շահերի պաշտպանության ոլորտներում ծրագրեր իրականացնող իրավապաշտպան կազմակերպությունները, կամ հեղինակները որպես ինֆորմացիայի աղբյուր վերցնում են վերոհիշյալ կազմակերպությունների ուսումնասիրությունները:

Իրական դեմքեր ու իրական անուններով հերոսներ նյութերում հանդիպելու հավանականությունը 0.1% է: Մա խոսում փաստ է առ այն, որ հայաստանյան ԼԳԲՏ համայնքի համար անհանդուրժողականության, ատելության, վախի մթնոլորտ է ստեղծված:

Ստորև բերված օրինակը իրական հերոսներով նյութ է, որտեղ փոխված են անունները և ներկայացվում է ՀՀ-ում ԼԳԲՏ անձանց շահերը պաշտպանող կազմակերպություններից մեկի ուսումնասիրություններն ու ներկայացված փաստերը, հեղինակը նաև տարբեր մասնագետների կարծիքներ է մատուցում՝ ցուցաբերելով մասնագիտական վարպետություն և չեզոքություն:

«Մամաս լաց լինելով ասում էր, որ եթե ամուսնանամ՝ կփոխվեմ»։ Չղիմանալով ճնշումներին՝ բազմաթիվ գեյեր ինքնասպան են լինում Հայաստանում

/Անգամ լուսանկարը, այս դեպքում, ոչ թե անհանդուրժողականության դրսևորում է նյութը պատրաստողի կողմից, այլ ցույց է տալիս հասարակության անհանդուրժողականության դրսևորումը/



...31-ամյա միասեռական Հրայրը (անունը փոխված է) «Մեղիալաբին» ասում է, որ հայ հանրությունում գերակա արժեք համարվող կին-ամուսին-երեխա շղթան իր համար վանդակ է, որտեղ իրեն ուզում էին տեղավորել իր ծնողները, «բայց ես դուրս պրծա այնտեղից»:

Այն, որ Հրայրը գեյ է, հայտնաբերել է հայրը մի գիշեր, երբ վերջինս իրենց տանը հյուրընկալել էր իր գեյ գուզընկերոջը:

«Պապաս բան չասեց, մամայիս էր պատմել,- ասում է նա,- մամաս լաց լինելով ասում էր, որ եթե ամուսնանամ, կփոխվեմ»:

Հրայրը մի քանի անգամ փորձել է սեռական հարաբերություն ունենալ աղջիկների հետ՝ մտածելով, որ միգուցե բիսեքսուալ է, սակայն հասկացել է, որ էմոցիոնալ բավարարվածություն ստանում է միայն տղաների հետ կապով:

ՓԻՆԲ-ը 2011թ. հանրային վերաբերմունքի [ուսումնասիրություն](#) է արել, համաձայն որի հարցվողների 70%-ի դիրքորոշմամբ հանրությունը պետք է դատապարտի ԼԳԲՏ անձանց, իսկ 98%-ը կարծում է, որ այն շեղում է: Նույնիսկ հարցման արդյունքում էլ երևում է «հայ լինելու» մասին առանձնահատուկ վերաբերմունք, և 52%ը նշել է, որ հայ ազգի ներկայացուցչին հարիր չէ ԼԳԲՏ անձ լինելը:

Ամբողջական հոդվածը՝ հետևյալ հղմամբ <http://medialab.am/news/id/5010/> :

ՀՀ առցանց տիրություն ատելության խոսքի դրսևորման գազաթնակետը.

Եվրատեսիլյան փուլ

ՀՀ առցանց տիրություն ատելության խոսքի դրսևորման գազաթնակետը

Մինչ Եվրատեսիլ

ՀՀ առցանց տիրություն ատելության խոսքի ամենաբուռն դրսևորումը ԼԳԲՏ համայնքի նկատմամբ տեղի ունեցավ մայիսի 11-ին, երբ Եվրատեսիլում հաղթող ճանաչվեց Ավստրիան ներկայացնող տրանսվիստիտ Կոնչիտա Վյուրստը:

Սակայն մինչ եվրատեսիլի եզարափակիչ փուլ հասնելը Կոնչիտա Վյուրստը հայ հասարակության ուշադրության կենտրոնում էր հայտնվել Հայաստանը Եվրատեսիլում ներկայացնող Արամ Երանյանի հետ ունեցած կոնֆլիկտի պատճառով:

Այսինքն եվրատեսիլյան բուռն դրսևորումը ընդդեմ ԼԳԲՏ համայնքի հայաստանյան հասարակության ունեցել էր զարգացման յուրահատուկ փուլ՝ իր դրսևորումներն ու արձագանքները գտնելով ՀՀ առցանց տիրություն:

Մեջբերում tert.am-ի հրապարակումից.

«Եվրատեսիլ» Ավստրիայի մորուքավոր ներկայացուցիչը պատերազմի մեջ է մտել Արամ Երանյանի հետ

<http://www.tert.am/am/news/2014/03/28/aram-konchita/>

«Եվրատեսիլ 2014» երգի միջազգային մրցույթի Ավստրիայի մորուքավոր ներկայացուցիչ Կոնչիտա Վյուրստի և Հայաստանի մասնակից Արամ Երանյանի միջև լեզվակոխիվ է սկսվել այն բանից հետո, երբ Արամ Երանյանը նրան «աննորմալ» է անվանել և «միջոցառմանն անհապատասխան անձ», գրում է Austrian Independent-ը:

Austrian Independent-ը գրում է, որ Արամ Երանյանը հարցազրույցի ժամանակ ասել է, որ չի ցանկանում նույն բեմում հանդես գալ Թոմաս Նյուվիլիթի հետ, ով ելույթ է ունենում բեմական Կոնչիտա Վյուրստ կեղծանվամբ:

Արամ Երանյանը, խոսելով Կոնչիտայի մասին, խորհուրդ էր տվել նրան որոշել, թե նա տղամարդ է, թե կին: Նա այնուհետև քննադատել էր միասեռականների համայնքն ընդհանրապես:

25-ամյա Կոնչիտան, լսելով այդ մեկնաբանությունների մասին, ասել է. «Կարծում եմ՝ դա նշանակում է, որ նա չի ցանկանում ամուսնանալ ինձ հետ: Թվում է՝ Արամը ցանկանում է, որ ես կին լինեմ, բայց ես կարող եմ ասել դա քեզ, Արամ ջան, ես աշխատող կին եմ և անհավանականորեն ծույլ տղամարդ ազատ ժամանակ, և դա չի փոխվելու: Եթե դու դժվարություններ ունես դա հասկանալու հետ կապված, ես ուրախ կլինեմ նստել և խոսել քեզ հետ: Եվ քո հումֆոր մեկնաբանություններով հանդերձ դա խոսակցություն է, որ մենք իսկապես պետք է ունենանք»:

Այս միջադեպից հետո պարբերաբար կայքերում հայտնվում էին թեմային վերաբերող նյութեր և կաժիքներ սոց. ցանցերից, ամենատարբեր վերնագրերով ու հատկապես ԼԳԲՏ համայնքի վերաբերյալ բացասական շեշտադրումներով:

✓ **Համացանցում է հայտնվել Արամ Երանյանի և Կոնչիտայի գրկախառնության տեսանյութը**

http://asekose.am/hy_AM/news/6/156441-hamacancoum-e-haytnvel-aram-mp3-i-e-koncitayi-grkaxarnoutyan-tesanyoute.html

✓ Արամ MP3. «Կոնչիտան գիտի, որ ես կատակում էի»

<http://style.news.am/arm/news/12377/aram-mp3-konchitan-giti-or-es-katakum-ei.html>

✓ ԿՈՆՉԻՏԱՆ ՈՒ ԱՐԱՍ MP3-Ը ԲԱՐԻՇԵ՞Ն ԵՆ

http://www.iravunk.com/index.php?option=com_content&view=article&id=15085:-mp3-&catid=41:lurer&Itemid=57

✓ Կոնչիտան իրեն ավելի տղամարդավարի պահեց, քան Արամ Mp3-ը

<http://blognews.am/arm/news/148241/konchitan-iren-aveli-txamardavari-pahec-qan-aram-mp3-y.html>

Այս վերջին գրառումը, որ վերնագրից տպավորություն է ստեղծվում, թե համեմատաբար հանդուրժող դրսևորում է պարունակում, սակայն կրկին ասելություն է սերմանում՝ Կոնչիտային համարելով այլասերված և կենդանի: Մեջբերում գրառումից, որը տեղադրվել էր 5-ից ավելի կայքերում.

«Ես միանգամայն այլ կերպ էի պատկերացնում Արամի ու այդ կենդանու «հաշտեցումը», բայց այն, ինչ ես տեսա, ավելի վատ էր, քան անգամ ես կարող էի պատկերացնել... Հանուն ինչի՞ Արամը տենց ցածր իջավ ու սկսեց էժանագին կռուտիտներ անել այդ այլասերվածի մոտ ու տեսախցիկների առաջ»:

Եվրատեսիլ : Բուն հաղթանակը, արձագանքներն ու դրանց զարգացումներում ատելության խոսքի դրսևորումը

Կայքերի կողմից առանց ավելորդ որակումների հրապարակվեցին, բայց նույն կայքերի կողմից ջանասիրաբար տեղադրվեցին Ֆեյսբուքյան գրառումներ ատելություն պարունակող բառերով ու բացասական վերաբերմունքով :

Այսպիսի ձևակերպումներով վերնագրեր ունեին Եվրատեսիլի հաղթանակի մասին նյութերը, որոնք սակայն սոց. ցանցերում տարածվում էին հայիոյախառը մեկնաբանություններով:

✓ «Եվրատեսիլ 2014»-ում հաղթեց տրանսվեստիտ Կոնչիտան

<http://www.hraparak.am/news/view/54913.html>

✓ «Եվրատեսիլ 2014»-ում հաղթեց Կոնչիտան. Արամ MP3-ն 4-րդն է

<http://civilnet.am/aram-mp3-eurovision-4th/>

Եվրատեսիլում հաղթեց Ավստրիայի ներկայացուցիչ Կոնչիտա Վյուրստը. Արամ Mp3-ը 4-րդն է

<http://blognews.am/arm/news/157225/evratesilum-haxtec-avstriayi-nerkayacucich-konchita-vyursty-aram-mp3-y-4-rdn-e.html>

Ֆեյսբուքյան գրառումներ

Վայ ես ձեր եվրոպայի ...ը, գոմիկների ...ը, ես ձեր տղա սիրողը

Հայաստանում ինչքան ԳՈՄԻԿ կա՝ արա ես ձեր :

Հայիոյանքներ էին տեղում Կոնչիտայի, եվրոպայի և հայ նույնասեռականների հասցեին:

Blognews.am կայքը «Սոցցանցերը Ավստրիայի ելույթի մասին» վերնագրի ներքո ներկայացնում է ոչ հայ օգտատերերի գրառումներ՝ հիմնականում ի պաշտպանություն Կոնչիտայի.

«Whats On TV»

Իսկապես հզոր երկու երգեր: Հունական ռեպը և իհարկե փայլուն Կոնչիտայի երգը Ավստրիայից, ում մենք շատ ենք սիրում:

Shakespeare Magazine

«Ավստրիայի ելույթը սիրեցի: Տղամարդ, ով հանդես է գալիս որպես կին ու մարտահարվեր է նետում տղամարդուն, դա շատ շեքսպիրյան կոնցեպտ է»:

<http://blognews.am/arm/news/157206/soccancery-avstriayi-eluyti-masin.html>

Բայց այս նյութը, կրկին տարածվելով սոցցանցերում, արժանանում է ասեղնային խոսքի: Օգտատերերը պահանջում են կայքից ներկայացնել նաև հայերի կարծիքները՝ անամոթ անվանելով և քննադատելով նաև ԼԳԲՏ համայնքի նկատմամբ հանդուրժող վերաբերմունք ցուցաբերած անձանց:

Կոնցիստա Վյուրստի հաղթանակից ըուպեներ անց արդեն սոց. ցանցերում, ապա նաև կայքերում հայտնվում են ասեղնային ու անհանդուրժողականություն քարոզող ֆոտոկոլաժներ և տեսանյութեր :

Ով զգվումա Կոնցիստայից լայք



Ատելության դրսևորման մեկ այլ խթան հանդիսացավ այն լուրը, ըստ որի **Հայաստանում SMS քվեարկությամբ Կոնչիտա Վյուրստը զբաղեցրել է 2-րդ հորիզոնականը:**

Նախ Ա.Ա. ֆեյսբուքյան էջում հայտնվեցին Հայաստանի և Ռուսաստանի եվրատեսիլյան քվեարկության արդյունքների աղյուսակները, ապա նրա գրառման հետ միասին դրանք հայտնվեցին նաև կայքերում.

Armenia In the Eurovision Song Contest 2014 Grand Final

In accordance with the Rules of the 2014 Eurovision Song Contest, Armenia voted with 50% televoting and 50% jury voting

Click on the icon to read more about the individual jury member →	JURY VOTING						TELEVOTING	SCORE BOARD	
	A և B	B և C	C և D	D և E	E և A	Avg. jury rank	Televoting rank	Combined rank	Points
	20	33	20	21	25	20	7	15	
	4	5	4	4	4	3	5	3	8
	25	23	25	25	25	25	25	25	
	11	8	5	3	9	5	19	11	
	15	9	11	15	11	11	21	23	
	16	6	16	18	17	17	17	20	
	2	1	2	3	2	2	4	1	12
	18	2	17	13	5	11	15	15	
	14	4	11	16	3	10	6	4	7
	23	21	23	24	23	24	2	14	
	3	7	3	5	16	4	12	5	8
	24	23	24	10	24	22	3	12	

Russia In the Eurovision Song Contest 2014 Grand Final

In accordance with the Rules of the 2014 Eurovision Song Contest, Russia voted with 50% televoting and 50% jury voting

Click on the icon to read more about the individual jury member →	JURY VOTING						TELEVOTING	SCORE BOARD	
	A և B	B և C	C և D	D և E	E և A	Avg. jury rank	Televoting rank	Combined rank	Points
	9	9	7	8	2	6	4	4	7
	2	1	3	2	1	1	2	1	12
	1	7	1	1	3	3	5	2	10
	13	17	16	16	18	13	11	10	1
	11	16	12	3	12	10	15	11	
	19	19	24	18	20	22	21	23	
	8	9	10	10	5	8	1	3	8
	24	11	19	12	15	15	20	19	
	15	25	22	19	19	24	19	20	
	3	2	6	5	7	3	12	7	4
	7	10	8	21	8	11	3	6	5
	21	12	20	25	23	23	14	21	

«Նախ արտանց շնորհավորում են **Արամ ԵՊ3**-ին հրաշալի ելույթի համար: Կրկնելով **Սիրուշոյի** արդյունքը՝ **Արամը** շատ ավելի բարդ խնդիր լուծեց: Պետք չէ մոռանալ, որ հիմա **50/50** քվեարկություն է և ժյուրիների անդամները մեղմ ասած հայաստանցիների նկատմամբ միշտ չի որ բարյացկամ են տրամադրված լինում: Նայեք, թե ինչ արդյունքներ է արձանագրել Արամը sms քվեարկությամբ ու կհամոզվեք:

Իսկ հիմա մի քանի փաստ, որ գուցե զարմացնի ձեզ: Նման տեքստերը սովորաբար այսպես են սկսում, իսկ դուք գիտեք, որ...

Հայաստանյան ֆեյսբուքը ոտնատակ է անում Ավստրիայի ներկայացուցչին, իսկ Եվրատեսիլի պաշտոնական էջի տվյալների համաձայն, Հայաստանում հեռախոսային քվեարկությամբ նա զբաղեցրել է 2-րդ հորիզոնականը: Ռուսաստանի հեռուստատեսությամբ դատափետում են Կոնչիտային, սակայն այնտեղ sms-ներով նա 3-րդն է: Այնպես, որ երբ գրում եք «այս ուր է զլորվում Եվրոպան», գրեք նաև «այս ուր են գահավիժում Հայաստանն ու Ռուսաստանը...»:

http://asekose.am/hy_AM/news/6/159070-hayastanoum-sms-qvearkoutyamb-koncita-vyourste-zbaxecrel-e-2-rd-horizonakane.html

Այս նյութը հասունկ խթան դարձավ, որպեսզի Եվրոպայից և Կոնչիտա Վյուրստից ատելության խոսքի «հրանոթներ»-ի ուղղությունը տեղափոխվի դեպի ԼԳԲՏ հայ ներկայացուցիչներ կամ Վյուրստի օգտին քվեարկող հայեր:

Հայիոյախառը գրառումները շարունակվում էին սոց. Ցանցերում՝ ԼԳԲՏ համայնքին պիտակելով **գոմիկ**, իսկ Վյուրստի օգտին քվեարկողներին՝ **գոմիկապաշտներ**:

Ֆեյսբուքյան գրառում .
այ էս արդեն վերջն ա... փաստորեն Հայաստանում գոմիկներն ու գոմիկապաշտները միանգամայն շատ լուրջ թիվ են իրենցից ներկայացնում:

Շոուբիզնեսի ներկայացուցիչները գրառումներն ու կարծիքները հայտնվեցին սոց. ցանցերում և մտան շրջանառության մեջ:



Շոուբիզնեսի ներկայացուցիչների գրառումների, ֆոտոկոլաժների և կարծիքների բախումը թեժացավ Ինգա և Անուշ Արշակյանների՝ **aravot.am**-ին տված հարցազրույցում արված հայտարարությունից հետո, որում ասվում էր. «Ինչպես հոգեկան հիվանդն է հակակրանք առաջացնում, այնպես էլ նման երեւոյթները: Իմ հակակրանքը ճիշտ այդպիսին է: Ես ոչ թե ազրեսիվ եմ, այլ մերժողական այդպիսի դրսեւորումների հանդէպ»:

Նյութի աղբյուրը՝ <http://www.aravot.am/2014/05/14/460287/>

Առհասարակ առցանց տիրույթում և գուցե նաև մեր իրականությունում հանդիպող յուրաքանչյուր հատկապես վիճահարույց թեմայի շուրջ քննարկում, արագ գաղափարական բախումների հարթակից իջնում է անձնական վիրավորանքների հարթակ: Եվ քանի որ **ԼԳՖՏ** համայնքն իր հիմնախնդիրներով ամենավիճահարույցների ցանկում է, ապա այստեղ ավելի արագ կերպով քննարկողները մոռանում են բուն գաղափարական բախման մասին՝ անցնելով անձնական վիրավորանքներին:



Անուշ և Ինգա Արշակյանների հայտարարությունից հետո հանդես եկան մարդու իրավունքների տեսանկյունից «**ԼԳՖՏ համայնքին**» և «**հոգեկան հիվանդներին**» որպես խոցելի խումբ պաշտպանող անձիք, որոնց մեծ մասը սակայն արագ իջավ անձնական վիրավորանքների դաշտ: Այս պարագայում սոց. ցանցերում սկսեցին շատ օգտատերեր հանդես գալ ի պաշտպանություն երգչուհի քույրերի՝ հաճախ հայիոյով **ԼԳՖՏ** համայնքին և երկրորդ պլան մղելով նրանց հայտնած գաղափարը:

Ազատություն ռադիոկայանի «Ֆեյսբուքյան ասուլիս» հաղողման ընթացքում Անուշ Արշակյանը ասել է.

«...և եթե ինչ-որ մարդիկ վիրավորվել են նրանից, թե ինչ է հնչել՝ մտածելով, որ ես նրանց եմ անձամբ վիրավորում, ես նրանցից խոնարհաբար ներողություն եմ խնդրում, ես միտք չունեի վիրավորելու ոչ սեռական փոքրամասնություններին, ոչ տրանսվեստիտներին, ոչ առավել ևս հոգեկան խնդիրներ ունեցող մարդկանց, մտքի սխալ ձևակերպում է տեղի ունեցել...»:



Նյութի աղբյուրը՝ <http://www.youtube.com/watch?v=Jh4LkrSgidA>

Այս տեսանյութի հրապարակումից հետո էլ շուրջիզնեսի ներկայացուցիչների շուրջ ալեկոծվող եվրատեսիլյան կրքերն ու քննարկումները աստիճանաբար մարեցին:

Անհանդուրժողականության ու ատելության խոսքի քաղաքական ենթատեստերն ու զարգացումները

ԼԳՖՏ համայնքի ներկայացուցիչների և եվրատեսիլի հետ կապված թեմաններն առցանց տիրույթում արագ ստանում են քաղաքական ենթատեքստ:

Կայքերում հայտնվեցին արդեն ԼԳՖՏ համայնքի խորհրդանիշ դարձած Կոնչիտայի մասին կարծիք հայտնող քաղաքական և հասարակական գործիչներ:

«Հայկական ժամանակ». Գեներալ Մանվելը, Շմայսը եւ Թոխմախի Միերը՝ Կոնչիտա Վյուրստի մասին



<http://news.am/arm/news/208833.html> Այս նյութը շատ կայքեր տեղադրեցին մամուլի տեսություն բաժնում՝ տարածելով այն առցանց տիրույթում.

«Հայկական ժամանակ» թերթը գրում է. «Երեկ ԱԺ ՀՀԿ խմբակցության պատգամավորներից հետաքրքրվեցինք, թե ինչ վերաբերմունք ունեն «Եվրատեսիլ» երգի մրցույթի հաղթած մասնակցի՝ Ավստրիայի ներկայացուցիչ Կոնչիտա Վյուրստի մասին:

ՀՀԿ-ական պատգամավոր, գեներալ Մանվել Գրիգորյանը մեր զրույցում նշեց, որ շատ վատ է վերաբերվում Կոնչիտային. «Մեր տղեն՝ Արամ MP3-ը, շատ լավ երգեց, բայց որ չգիտեմ ինչ կնիկների ընտրեցին, էդ շատ վատ ա», - ասաց Գրիգորյանը՝ ավելացնելով. «Շատ վատ եմ վերաբերվում Կոնչիտային էլ, էդ երեւոյթին էլ: Ես էդ մասին չեմ էլ ուզում խոսամ: Մեր Արամը կարգին տղա է ու կարգին երգեց: Հայ ազգը պատմականորեն մշակութային ժողովուրդ ա եղել, շատ ժողովուրդներ չեն եղել, հայ ազգի մշակույթը պատմաբանական շատ ուժեղ է եղել, եղա՞վ», - անհասկանալի ձևակերպեց իր միտքը Մանվել Գրիգորյանն ու կեսկատակ-կեսլուրջ ավելացրեց. «Դրանք կանանց գործը ձեռներից առնում են»:

ՀՀԿ-ական մեկ այլ պատգամավոր **Առաքել Մովսիսյանը (Շմայս)** ասաց. «Շատ սիրուն աղջիկ էր, բայց դե մի քիչ թերություն ուներ, ես չասեմ՝ դուք գիտեք: Իրանց համար դա սովորական բան ա: Արամը տղայավարի ցույց տվեց, մնացածը չգիտեմ: Արամը ցույց տվեց մեր ազգի թասիբն ու նամուսը ու Ավստրիայից լավ երգեց»:

ՀՀԿ խմբակցության մեկ այլ պատգամավոր Մհեր Սեդրակյանը (Թոխմախի Մհեր) պատասխանեց շատ կարճ. «Էսօր աշխարհը ոնց որ էդ կատեգորիան ա: Դրանց թիմը մեծ ա, մենք դրանց չափ էլ չկանք փաստորեն, ու դրա համար էլ էսօր ինչ ուզում անում են: Պետք է պայքարենք, որ էդ որակի մարդիկ վերանան»:

ՀՀԿ-ականը Կոնչիտայի մասին. «Երբ ընկնում ես ազնավների երանի մեջ, պիտի կռկռաս»



ՀՀԿ-ական պատգամավոր **Հակոբ Հակոբյանը** «Ենթատեսիլ» երգի միջազգային մրցույթում **քաղաքական տարրեր** չի ուզում տեսնել: Դրանով պայմանավորված՝ ես չե՛ս համակարգում այն տեսակետին, որ ի տարբերություն հայ եսանայեցիների, ազգային ժողովրդից բավականին ցածր միավորներ ստեղծին Հայաստանին:

«Ցուրարանչույթ միջազգային մրցույթ» ունի իր պահանջները, իսկ դրանց հիմնականում լավ տիրապետում են այդ դասակարգ սովորածները: Ինչ վերաբերում է հայ եսանայեցի տղամիջակներին, չնայած հայերն իրար վերջերս բացարձակ չեն սիրում, բայց հենց որ խնդիրը հանդում է մեր անձր հաստատելու փաստին՝

«Ենթատեսիլ»-ում, միավորվում ենք, ստեղծել է Հ. Հակոբյանը:

ՀՀԿ-ական պատգամավորը «դասակարգություն» չի ուզում տեսնել եսանայեցիների միջև: Իսկ Աղջիկների բարձր միավորների փաստը մեջ:

Նյութի աղբյուրը՝ <http://www.7or.am/am/news/view/68020/>

Հայտնվեցին անգամ քաղաքական վերլուծական հոդվածներ:



Դրանցից մեկում հեղինակը բացի միջազգային քաղաքական ենթատեքստից, Կոնչիտայի նկատմամբ հայ հասարակության խորշանքի և հակակրանքի ֆոնին ընդգծում է Երրորդ սեռի գաղափարի պրոպագանդան Եվրոպայի կողմից և մեր հասարակության բնորոշ դրսևորումներից մեկը՝ հանրության կողմից չընդունվող կամ քիչ ընդունելի գաղափարի համակրանքի այսպես ասած թաքուն դրսևորումը:

«Կոնչիտա և քաղաքականություն» հոդվածից հատված.

Եվ եվրատեսիլյան այս փորձաշրջանի թերևս ամենավտանգավոր հանգամանքն այն է, որ մերոնք թաքուն են համակրում այդ գաղափարը: Հայտնի բան է՝ թաքուն ծխողն ավելի շատ է ծխում, քան այդ գործն ավաշքյարա անողը. թաքուն խմողն ավելի շատ է կախված խմիչքից, քան բացահայտ ուտող-խմող մարդիկ. Եվ վերջապես, փողոցներում բացահայտ վաճառքի դուրս եկած կինն այնքան վտանգավոր չէ, որքան նույն զբաղմունքի տեր այն ծպտյալը, որ երկար շրջագգեստ է հագնում և Կոնչիտա բառը լսելիս մինչև ականջները կարմրում:

Մարինա Բաղդասյան

Նյութի աղբյուրը՝ Newsbook.am

Քաղաքական ենթատեքստի մյուս դրսևորումն այն էր, որ Կոնչիտան դարձավ բացասական կերպար և սկսվեց նույնացվել ՀՀ իշխանությունների, իշխող ՀՀԿ կուսակցության հետ, և ընդդիմության, ակտիվիստների կողմից մեծ թափով շրջանառության մեջ դրվեցին ամենատարբեր ֆոտոկոլաժներ:

Մեր Կոնցիտիկոն ավելի լավն է...



Այս թեման այնքան հասունացավ ու քննարկվեց, որ անցան տեղական ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների բացահայտմանը:

Մպասվում է հայ «կոնցիտա» պաշտոնյաների ցուցակի հրապարակումը (տեսանյութ)

Հայ հանրությանը, եթե ոչ բոլորին, ապա գոնե մեծ մասին շարունակում է հետաքրքրել, թե երբ պետք է վերջապես «Ազգային անվտանգություն» կուսակցության ղեկավար Գառնիկ Իսազուլյանը հրապարակի իր ձեռքի տակ եղած հայ արվամոլ պաշտոնյաների անունները: Armlur.am-ի հետ զրույցում Իսազուլյանը մի առիթով նշել էր, որ չի պատրաստվում գնալ այդ



քայլին, քանի որ դա այլ անձի փաստաթուղթ է և նրա իսկ փոխանցմամբ ցանկը բավականին տարողունակ է: Ինչևէ, «Եվրատեսիլ 2014»-ում հաղթանակած Ավստրիայի ներկայացուցիչ տրանսվիստիտ Կոնցիտա Վյուրստի ֆոնին, շատերն են ցանկանում իմանալ, թե ովքեր են մեր էլիտայի սեռական փոքրամասնության ներկայացուցիչները: «Ազգային անվտանգություն» կուսակցության ղեկավարն իր խոսքում չբացառեց, որ եթե առիթ լինի հանդիպել Արմեն Ավետիսյանի հետ, կզրուցեն, և նպատակահարմար գտնելու

դեպքում, կհրապարակեն հայ արվամոլ պաշտոնյաների ցուցակը: Ավելի մանրամասն՝ Armlur.am-ի տեսանյութում:

Նյութի աղբյուրը՝ <http://www.youtube.com/watch?v=vyHm5h3X5Pc>

Իսազուլյանը՝ արվամոլ պաշտոնյաների անունները հրապարակելու մասին:

Այս նյութը խոսում է սեփական երկրում ԼԳԲՏ համայնքի հայ ներկայացուցիչների նկատմամբ անհանդուրժող վերաբերմունքի մասին:

Եվրոպամետ- ռուսամետ

Եվրատեսիլյան թեմայի շուրջ քաղաքական ենթատեքստում Հասարակության քաղաքականցված, անհանդուրժող, բևեռացված և ծայրահեղ դրսևորումներից մեկն էլ, որ այս ընթացքում շատ հաճախ էր հայտնվում առցանց քննարկումներում, հետևյալ միտքն էր.

- ✓ «Եթե դու **եվրոպամետ** ես ուրեմն հանդուրժում ես ԼԳԲՏ համայնքին, իսկ եթե **ռուսամետ**՝ ուրեմն դեմ ես»:
- ✓ «Կոնցիտայի» կամ ԼԳԲՏ համայնքի նկատմամբ հանդուրժող վերաբերմունքը ֆեյսբուքյան գրառումներում հաճախ նույնացնում են **եվրոփինտեգրացման** հետ, իսկ անհանդուրժող վերաբերմունքը՝ ռուսամետության կամ մաքսային միությանն անդամակցելու հետ:

Օրինակ.

- ✓ Արա սա գեյվրատեսիլ էր, Պուտինի ցավը տանեմ, ինչ եվրոպաաաաա

- ✓ Ես ձեր Եվրոպայի և գոմիկների ինչն եմ ասել...
- ✓ Սիրելի եվրոպամետներ, ես է ձեր ապագան, կեցցե մաքսային միությունը ...
- ✓ Ի հակադրություն այս գրառումների ֆեյսբուքյան օգտատերերից մեկը գրել է հետևյալը



Ի դեպ այս մտեցումը՝ ռուսամետության և եվրաինտեգրացիայի բևեռացված բախումը, առցանց տիրություն որպես ենթատեքստային դրսևորում հաճախ հանդիպում է նաև այլ թեմաների քննարկման ընթացքում:

Կրոնական անհանդուրժողականությունը ԼԳԲՏ համայնքի նկատմամբ

ԶԼՄ-ներում, սոց. ցանցերում, առցանց տիրություն եվրատեսիլյան կրթերի շուրջ հայտնվեցին նաև հոգևորականների և հավատացյալների տեսակետներ և կարծիքներ ԼԳԲՏ համայնքի և եվրատեսիլյան հաղթանակի շուրջ:

Քրիստոնեական ինքնությունից հրաժարվելու քայլ Եվրոպայում: Ռուս ուղղափառ եկեղեցու արձագանքը Կոնչիտա Վուրստի հաղթանակին:

Նյութի աղբյուրը՝ <http://www.tert.am/am/news/2014/05/11/konchita-russian-church/>

Եվրատեսիլ, թե՛ եվրապոլիտություն

Մենք պետք է հրաժարվենք նման մրցույթի մասնակցելուց. քահանան «Եվրատեսիլի» եւ Կոնչիտա Վուրստի մասին

<http://style.news.am/arm/news/13401/menq-petq-e-hrazharvenq-nman-mrcuyti-masnakceluc-gahanan-evratesili-ev-konchita-vyursti-masin.html>

Հայտնվեցին նաև կրոնական թեմաներով ֆոտոկոլաժներ .

<http://www.sarkavagagirq.net/2012/05/mexqy-handurjeln-el-mexq-e.html>



Մե՛ղքը հավո՛րի՞թե՛ս... Է՛լ մե՛ղք է... Ա՛նտե՛ր հե՛տո՛ր թե՛ս... Է՛լ մե՛ղք է... Ա՛նտե՛ր ը՛լ մասո՛ւյնսն ի՞նչ իսկանանա՞նք ինչի՞...
Գրությունը հրատարակվել է 2012 թվականի մայիսի 11-ին

Ատելության խոսքի և անհանդուրժողականության ինֆորմացիոն հոսքերը ՀՀ առցանց տարածք ռուսական աղբյուրներից

Անհանդուրժողական և ատելության խոսքի դրսևորման մեծ հոսք հայկական առցանց տիրություն շրջանառության մեջ մտավ հատկապես ռուսական աղբյուրներից, ինչպես ռուսական ՋԼՄ-ներից, այնպես էլ ռուս օգտատերերի անձնական էջերից:

Ստորև ներկայացված են մի քանի օրինակներ:

- ✓ «Ապացուցի՛ր, որ դու Կոնչիտա չես». Instagram-ի ռուս օգտատերերը ֆլեշմոբ են անցկացրել <http://www.tert.am/am/news/2014/05/11/rus-instagram/>



- ✓ Ռուսաստանում առաջարկում են թույլ չտալ Կոնչիտա Վյուրստի մուտքը երկիր:
- ✓ ՌԴ փոխվարչապետը Կոնչիտա Վյուրստին անվանել է «եվրահեռանկար եվրաինտեգրվողների համար»
- ✓ Ռուսաստանը ցանկանում է հրաժարվել «Եվրատեսիլ»-ից եւ արգելել Կոնչիտա Վյուրստի ելույթները <http://blog.1in.am/blog/80737.html>
- ✓ Կոնչիտան ծաղրում է Պուտինին <http://yerevannews.am/?p=22981&l=am/konchitan+caxrum+e+putinin>

Հումորն ու անհանդուրժողականությունը

Հետաքրքրական է, որ այս առումով հումորիստների մի զգալի մաս առցանց տարածքում կատակում էին առանց ասելության խոսք սերմանելու, իսկ շատ օգտատերեր ամենագոնեիկ կերպով օգտագործում էին հայկական հումարային հաղորդումների հիման վրա պատրաստված ֆոտոկոլաժներ և տեսանյութեր ցածրաճաշակ երգերի ուղեկցությամբ.



Նյութի աղբյուրը՝

<https://www.facebook.com/photo.php?v=650333565015868&set=vb.100001176905466&type=2&theater>



Նյութի աղբյուրը՝ <http://www.youtube.com/watch?v=l6dqWI-B6r4>





Կարգին Մկոն՝ Կոնչիտային. «Կոնչիտա ես, ինչ ես, արի՛ ասեմ, արա՛».

<http://zham.am/am/news/27182.html>

Ատելության խոսքի դեմ

Ատելության խոսքը քննադատող գրառումները սակավաթիվ են ՀՀ առցանց տիրույթում:

Շատ քիչ օգտատերեր հանդես եկան եվրատեսիլյան փուլում ընդդեմ ատելության խոսքի, երկու օրինակ ստորև.

G.V. - Ես Կոնչիտայի օգտին եմ քվեարկել ու հետո էլ սրտանց ուրախացել իրա հաղթանակի համար: Եղա՛ վ!

Ասա մարդ ա, շատ լավ երգել ա, հաղթել ա, էլ ինչ եք ընկել սար ու ձոր ու ատելություն եք տարածում:

Ա.Օ. - **1 hr · Erevan** · Ժողովուրդ Կոնչիտայի հաղթելուց հետո հումֆոբիայի դրսևորումներ եմ նկատել: Հայտնեմ իմ տեսակետը նույնասեռականների վերաբերյալ: Բնության մեջ՝ թե կենդանիների, թե մարդկանց մեջ, նույնասեռականությունը միշտ եղել ա, ուղղակի բնությունը իրանց թվաքանակը ստաբիլ ա պահում, այսինքն իրանք երբեք չեն ավելանում կամ պակասում: Օրինակ նույնասեռական կենդանիներ կան շների, գայլերի, կատուների, ընձուղտների, պինզվիների, դելֆինների, առյուծների, որոշ տեսակի թռչունների, կապիկների, նույնիսկ միջատների մեջ: Նույնասեռականներ Հայաստանում էլ են միշտ եղել, թե Խորհրդային Միության ժամանակ, թե դրանից առաջ, թե միջնադարյան Հայաստանում, թե հին Հայաստանում. ավելին ասեմ, մեր հայտնի արքաներից մեկը բիսեքսուալ ա եղել: Անկեղծ ասած ես էլ էի մի ժամանակ անհանդուրժող իրանց նկատմամբ, ասում էի պետք ա վառել դրանց, զգվելի են, բայց կամաց-կամաց հասկացա, որ իրանք, բացի սեռական կողմնորոշումից, ոչնչով մեզնից չեն տարբերվում: Հիմա ունեմ նույնասեռական ընկերներ ու ոչ մի խնդիր չկա իրանց հետ շփվելու մեջ:

ԻՄ ՀԱՄԱՐ ՄԱՐԴՈՒ ՍԵՌԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇ ՉԻ: Բայց կա մի բան, որը երբեք չեմ ընդունի ու կպայքարեմ դրա դեմ. դա նույնասեռականության քարոզն ա, չնայած Հայաստանում նման բան չեմ նկատել:

Հետազոտության ընթացքում մեղիա դաշտի, այդ թվում նաև առցանց տիրույթում եվրատեսիլյան բախումների, ու զարգացումների ամփոփ վերլուծական հոդված հրապարակվեց media.am կայքում, և քանի որ այն նախադեպային էր ուսումնասիրված ժամանակահատվածում, ներկայացնենք ամբողջությամբ.

Գույնզգույն պատերազմական իրավիճակ մեղիայում

«Մորուսավոր կնոջ կերպարանքով մեղեդային երգ կատարած Կոնչիտա Վյուրստն իր ափի մեջ հավաքեց հայաստանյան տեղեկատվական դաշտն ու շարունակում է բորբոքված պահել ոչ միայն սոցցանցերը, այլև դասական մեղիան»:

«Մորուսավոր կնոջ կերպարանքով մեղեդային երգ կատարած Կոնչիտա Վյուրստն իր ափի մեջ հավաքեց հայաստանյան տեղեկատվական դաշտն ու շարունակում է բորբոքված պահել ոչ միայն սոցցանցերը, այլև դասական մեղիան»:

Նկատելի է, որ վերջին օրերին սոցցանցերի հայաստանյան հատվածում ու մեղիայում պատերազմական իրավիճակ է: Այդ պատերազմը սկիզբ է առել եվրոպական երգի մրցույթից ու եկել հասել ամենաթաքնված հոգեբանական շերտերը՝ արթնացնելով մարդկանց հոգում սեփական կարեւորության գիտակցումը: Գրում, մեկնաբանում, իրենց ցատումն ու վստահ դիրքորոշումն են հայտնում բոլորը:

Տեսակետ հայտնելը բավարար չեղավ, հարկ համարվեց նաև նսեմացնել, հայհոյել ու ծաղրել հակառակ տեսակետն ունեցողներին: Այդպես ոմանք (երկու կողմերում էլ գտնվող) ոչ միայն սեփական այքում են բարձրանում եւ ձեռք բերում «սկզբունքային» մարդու իմիջ, այլև ապացուցում են, որ իրենց աշխատանքը լավ են կատարում:

....

Եվ ստացվեց այնպես, որ մորուսավոր կնոջ կերպարանքով մեղեդային երգ կատարած Կոնչիտա Վյուրստն իր ափի մեջ հավաքեց հայաստանյան տեղեկատվական դաշտն ու շարունակում է բորբոքված պահել ոչ միայն սոցցանցերը, այլև դասական մեղիան:

Տարօրինակ ու հուզումնառատ կին/տղամարդ Կոնչիտան առիթ դարձավ խոսելու ընտրությունների, քաղաքականության, սեռական խնդիրների, մարդկային զգվանքի ու հարգանքի, պետական ուղու ու ազատականության մասին: Նաև համեմատելու ընդհանուր հումանիստական դրույթներն ու պապենական աղաթները, եվրոպական ու հայկական արժեքները (կարծես դրանք հակադրվում են):

.....

Իսկ դասական մեղիան, որը սնվում է սոցցանցերից ու հենց ցանցում էլ ապահովում է իր թրաֆիքը, սկսում է հարայիքոցի հետ միասին ձեռք բերել այն անպատասխանատվության հմայքն ու թեթեւությունը, որի շնորհիվ էլ օրեցօր աճում է սոցցանցերի ազդեցությունը: Այս իրավիճակում լրագրողական նյութերի ընթերցված լինելն ուղիղ համեմատական է նյութերում տեղ գտած կոնյունկտուրային զրնգոցի, կտրուկ, հնչեղ, մակերեսային բնութագրություններով լցված լինելու հետ: Դա, թերեւս, դեղին մեղիա չէ, ավելի շուտ՝ գույնզգույն: Մանր-մունր զրնգոցները ստեղծում են օպերատիվության ու սկանդալի շղարշ եւ, ի վերջո, ամենից շատը ընթերցվում:

«Եվրատեսիլ»-ի մասին գրգռված ու հախուռն կարծիքներ հրապարակվեցին, իրենց տեսակետը շրջանառության մեջ դրեցին մուլթ անցյալ ունեցող պատգամավորները, քաղաքական տեխնոլոգները, կրոնական փոքրմասնությունները:

Անգամ «Հ1»-ն իր գլխավոր լրատվական թողարկման ընթացքում հատուկ անդրադարձ կատարեց «Եվրատեսիլ»-ի հաղթողին եւ խորհուրդ տվեց նրա երկրպագուներին գնալ ծառեր տնկել (ինչը, թերեւս, պետք է ընկալել որպես քաղաքապետարանին ուղղված կշտամբանք, չէ՞ որ կանաչ տարածքները անընդհատ քչանում են):

....

Ինֆորմացիոն պատերազմներում այդպես է՝ փոքր կայծից մեծ խարույկ է բռնկվում: Մանավանդ, որ կայծեր (եւ խայծեր) մոզոնելու ու տարածելու գործում հմուտ մասնագետներ կան: Նրանք հարկ եղած դեպքում հիշատակում են Մայր Հայաստանն ու իրենց տղամարդավարի խոսքն ասում չսափրված երգիչների ու քրիստոնեական արժեքների մասին: Խորհուրդ տալիս ոչ թե կոռուպցիայի, այլ նույնասեռականների դեմ պայքարել:

Սովորաբար երբ լարման ջերմաստիճանն անընդհատ աճում է, պահանջ է առաջանում վերախմաստավորել տարբեր միջերը, վախերն ու կոչերը: Ի վերջո, նաեւ նոր փաստարկներ գտնել, քանի որ ազգային միաբանության կոչն ընդդեմ Կոնչիտայի մի տեսակ մանր է հնչում:

Պատերազմները երբեմն բարեբեր են: Առավելեւս նրանք, որոնք կարծրատիպեր են քանդում ու մտքեր գունավորում:

Նունե Հախվերդյան

Հոդվածագիրը դրական երանգ է նկատում մեղիա դաշտում և առցանց տիրություն տեղի ունեցած «պատերազմներին»՝ ակնկալելով «կարծրատիպերի քանդում և մտքերի գունավորում»:

Սակայն հետազոտությունը ցույց է տալիս, որ առցանց տիրություն ԼԳԲՏ համայնքի վերաբերյալ նյութերի 80-85%-ը պարունակում են անհանդուրժողականություն և ատելության խոսք, իսկ 15- %-ը միայն ներկայացնում են համեմատաբար անաչառ տեղեկատվություն, և միայն մոտ 5%-ն է օբյեկտիվ կերպով ներկայացնում հայաստանյան ԼԳԲՏ համայնքի հիմնախնդիրները:

Առաջարկություններ

- ✓ ԼԳԲՏ հայ համայնքի հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկացվածության բարձրացում:
- ✓ ԼԳԲՏ հայ համայնքի հիմնախնդիրների անաչառ լուսաբանում:
- ✓ Հանդուրժողականության խթանում ԼԳԲՏ համայնքի նկատմամբ:
- ✓ ԼԳԲՏ համայնքի հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպություններին, իրավապաշտպաններին առաջարկում ենք մշակել ՋԼՄ-ների հետ աշխատելու ռազմավարություն և մեխանիզմներ՝ ԼԳԲՏ համայնքի խնդիրները առանց ատելության խոսքի, անաչառ լուսաբանելու և դրանով իսկ հանդուրժողական մթնոլորտի ձևավորմանը նպաստելու համար:
- ✓ Միջազգային կազմակերպություններին, իրավապաշտպաններին առաջարկում ենք ուշադրություն սևեռել ներկա իրավիճակին՝ ՀՀ-ում ԼԳԲՏ համայնքի նկատմամբ հանրային կերպով ատելության խոսքի քարոզումը կանխարգելելուն նպաստելու համար:
- ✓ ՋԼՄ-ներին առաջարկում ենք բարձրացնել տեղեկացվածությունը ԼԳԲՏ համայնքի հիմնախնդիրների վերաբերյալ, ավելի անաչառ ներկայացնելով դրանք՝ խուսափել ատելության խոսք տարածելուց: